



# ՍՈՒՐԲ ԶԱՆՈՒ ԱՆԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՆՆԵՆԻՑԻ

**ՏԱՏԵԱՐ ԿՐՈԱԿԻ**  
**3 ՄԱՐՏ 2024**

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4

## ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (56.1-57.21)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ.  
«Իրաւունքը յարգեցէք եւ արդարութիւն ըրէք, որովհետեւ ահա մօտեցաւ ժամանակը երբ պիտի փրկեմ ձեզ, հասաւ ժամանակը երբ պիտի ողորմիմ ձեզի: Երանի այն մարդուն որ արդարութիւն կ'ընէ եւ իրաւունքը կը յարգէ, իմ Շաբաթներս կը պահէ եւ չի պղծեր զանոնք, եւ կը դադրի անիրաւութիւն գործելէ»: Տիրոջ հաւատացած ոեւէ օտարազգի թող չխորհի եւ չըսէ. «Տէրը զիս իր ժողովուրդին մէջ պիտի չընդունի», եւ ոեւէ ներքինի թող չմտածէ, ըսելով. «Ես անպտուղ ծառ մըն եմ, Տէրը զիս չ'ընդունիր»:

Տէրը այսպէս կ'ըսէ.  
«Այն ներքինիները որոնք իմ Շաբաթներս կը պահեն, կ'ընտրեն այն բաները զոր ես կ'ուզեմ եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, իմ տանս եւ իմ ժողովուրդիս մէջ աւելի լաւ տեղ եւ պատիւ պիտի տամ անոնց, քան իմ որդիներուս եւ դուստրերուս. անոնց պիտի տամ յաւիտենական պատիւ մը որ բնաւ պիտի չջնջուի: Իսկ այն օտարազգիները որոնք ինծի հաւատացին ինծի ծառայելու համար, եւ իմ անունս սիրեցին՝ ինծի ծառայ եւ աղախին ըլլալու համար, եւ բոլոր անոնք՝ որոնք իմ Շաբաթներս կը պահեն եւ չեն պղծեր, եւ իմ Ուխտիս հաւատարիմ կը մնան, զանոնք իմ սուրբ լեռս պիտի տանիմ եւ զիրենք պիտի ուրախացնեմ իմ աղօթքի տանս մէջ. պիտի ընդունիմ իմ Սեղանիս վրայ իրենց մատուցած ողջակէզներն ու զոհերը, որովհետեւ իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ բոլոր հեթանոսներուն համար»:

Այսպէս կ'ըսէ Տէր Աստուած որ Իսրայէլի ցրուած զաւակները կը ժողովէ.

«Պիտի ժողովեմ օտարազգիները եւ իմ ժողովուրդիս միացնեմ»:

Եկէ՛ք, ով դաշտի գազաններ, եկէ՛ք կերէ՛ք իմ ժողովուրդս, ո՛վ անտառի գազաններ: Տեսէ՛ք, ահա, կուրցած են անոր առաջնորդները, ի վիճակի չեն դատելու. կը նմանին համր շուներու որոնք չեն կրնար հաչել. անկողին կ'երազեն, քնանալ կը սիրեն: Իրենց հօգիով աներես շուներու կը նմանին. չարիքէն չեն կշտանար, որովհետեւ կորսնցուցած են իրենց դատողութիւնը: Ամէնքն ալ իրենց ուզածը ըրին, իւրաքանչիւրը իր շահը հետապնդելով: Ըսին. «Եկէ՛ք գինի առնենք եւ խմենք՝ մինչեւ գինովնանք, որովհետեւ վաղն ալ այսօրուան պէս եւ շատ աւելի լաւ պիտի ըլլայ»:

Տեսէ՛ք ի՛նչպէս արդարը կը կորսուի եւ ոեւէ մէկը հոգ չ'ընեն. արդար մարդիկը աշխարհէն կը վերցուին եւ ոեւէ մէկը չ'անդրադառնար թէ աշխարհի անիրաւութեան պատճառով անիկա կը վերցուի: Բայց անիկա խաղաղութեամբ գերեզ-ման պիտի մտնէ որովհետեւ Աստուած է որ զայն վերցուց աշխարհէն: Իսկ դուք հո՛ս եկէ՛ք, անօրէն զաւակներ, պոռնիկներու եւ շնացողներու սերունդ: Ո՞վ կը ծաղրէք, որո՞նք դիմաց կը փորձէք արդարանալ. միթէ՛ դուք չընտրեցի՞ք ձեր կորուստը, ո՛վ անօրէն սերունդ: Դուք չէի՞ք որ անտառախիտ ծառերուն տակ ձեր կիրքերը հրահրող աստուածներու կ'աղօթէիք եւ ձորերու խորը, ժայռերու գլխուն կամ քարայրներու մէջ ձեր զաւակները կը մորթէիք: Այդ քարէ կուռքե՛րը պիտի ըլլան ահա ձեր բաժինը. անո՛նք պիտի ըլլան ձեր ժառանգելիքը, որովհետեւ անոնց առջեւ թափեցիք ձեր գինիները եւ անոնց մատուցանեցիք ձեր զոհերը: Եւ կ'ուզէք որ այս բոլորին վրայ չբարկանամ,- կ'ըսէ Տէրը:

Բարձր լեռան բարձունքին դրիք ձեր պոռնկութեան անկողինը, հոն ելաք զոհ մատուցանելու: Ձեր տուններուն դռներուն դրանդիկներուն ետին ալ այդ կուռքերուն յիշատակները կախեցիք, կարծելով որ ինձ-մէ հեռու մնալով աւելի բան մը պիտի գտնէք: Ձեր անկողիները լայնցուցիք, այր հոմանիներու հետ անկողին մտաք եւ անդադար պոռնկութիւն ըրիք անոնց հետ:

Օտար երկիրներէ բազմաթիւ աստուածներ որդեգրեցիք, եւ տակաւին ուրիշներ ալ փնտռելու համար ներկայացուցիչներ զրկեցիք ձեր սահմաններէն դուրս. այնքան նուաստացաք որ նոյնիսկ դժոխքէն ձեզի աստուած մը փնտռեցիք: Եւ թէպէտ նոր աստուածներ փնտռելէն յոգնեցաք, բայց բնաւ չըսիք. «Ա՛լ կը բաւէ», որովհետեւ խորհեցաք թէ անոնք կրնան ձեզի ոյժ տալ, եւ ուստի չհնազանդեցաք ինծի: Որմէ՞ վախցաք կամ սարսափեցաք որ ուրացաք զիս եւ չյիշեցիք անգամ, մոռցաք զիս եւ ձեր հոգն անգամ չըրիք: Ես ալ հիմա ձեզ տեսնելով հանդերձ՝ պիտի անտեսեմ, որովհետեւ յաւիտենական Աստուածն եմ ես, եւ դուք ատիկա գիտնալով հանդերձ՝ չվախցաք ինձմէ: Հիմա ձեզի ցոյց պիտի տամ ձեր արդարութիւնը՝ ձեզի յայտնելով ձեր չարիքները, որոնք պիտի չօգնեն ձեզի: Ձեր այդ կուռքերուն պիտի աղաղակէք, բայց անոնցմէ ոեւէ մէկը ձեզ պիտի չփրկէ ձեր նեղութենէն, որովհետեւ հովը պիտի քչէ ձեր աստուածները եւ մրրիկը զանոնք պիտի տարտղնէ: Մինչդեռ անոնք որոնք ինծի յուսացած են՝ անոնք երկիրը պիտի ստանան որպէս վարձատրութիւն, իմ սուրբ լեռս պիտի ժառանգեն: Այն ատեն պիտի ըսեն. «ճամբաները մաքրեցէք. իմ ժողովուրդիս ճամբէն վերցուցէք ամէն խոչընդոտ»»: Այսպէս կ'ըսէ Բարձրեալ Տէրը որ բարձունքներուն մէջ կը բնակի յաւիտեան, ան՝ որ սուրբերուն մէջ Սուրբն է. ԲԱՐՁՐԵԱԼ ՏԵՐ է անոր անունը. որ իր սուրբերուն մէջ կը բնակի, համբերութիւն կու տայ ընկճուածներուն եւ կեանք կու տայ սրտաբեկներուն, ըսելով. «Յաւիտեան վրէժխնդիր պիտի չըլլամ, միշտ ձեզի դէմ բարկացած պիտի չմնամ. չէ՞ որ ես եմ հոգին տուողը, ես ստեղծեցի բոլոր շունչերը: Կարճ ժամանակ մը տրտմեցուցի իմ ժողովուրդս իր մեղքերուն պատճառով. հարուածեցի զայն, երես դարձուցի անկէ, եւ ան սրտնեղած՝ աւելի ըմբոստացաւ եւ իր ուզածը ըրաւ: Բայց ես իր խորհուրդներն ու գործերը տեսայ եւ զայն բժշկեցի. իմ խօսքովս մխիթարեցի զայն՝ ճշմարիտ մխիթարութիւնը տալով իրեն եւ իր սգաւորներուն: Խաղաղութեան վրայ խաղաղութիւն տուի թէ՛ հեթանոսներուն եւ թէ՛ իմ ժողովուրդիս,՝ կ'ըսէ Տէրը,՝ եւ ես պիտի բժշկեմ զիրենք: Իսկ անօրէնները պիտի ծփան ծովու մը պէս որ հանգիստ չունի բնաւ, եւ որուն ջուրերը ցեխ ու կաւ դուրս կը նետեն: Այո, ամբարիշտները խաղաղութիւն պիտի չգտնեն»,՝ կ'ըսէ Տէրը:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԵՓԵՍՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**

(4.17-5.14)

**Ա**րդ, Տիրոջ կողմէ կ'ազդարարեմ ձեզի.՝ ըլլայ որ կրկին դառնաք այն կենցաղին որով հեթանոսները կ'ապրին անմտօրէն: Անոնց միտքը խաւարած է. իրենց տգիտութեան եւ յամառ անտարբերութեան պատճառով օտարացած են Աստուծոյ կեանքին, եւ քանի այդ կեանքին յոյսը չունին, իրենք զիրենք անառակութեան տուած՝ ամէն պղծութիւն կը գործեն անյագօրէն: Բայց ես ձեզի սորվեցուցի թէ այդ չէ՛ Քրիստոսի ճամբան: Դուք լսեցիք իր պատգամները եւ իրեն միանալով սորվեցաք թէ Յիսուսի մէջ է ճշմարտութիւնը: Ուստի մոռցէ՛ք ձեր հին ինքնութիւնը, այսինքն ձեր նախկին ապրելակերպը, որ խաբուսիկ ցանկութիւններով ապականած էր, վերանորոգուեցէ՛ք հոգիով՝ ձեր մտածելակերպը փոխելով, եւ եղէք նոր մարդ մը, Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած. եւ ապրեցէ՛ք ճշմարիտ կեանքը, արդարութեամբ եւ սրբութեամբ:

Հետեւաբար ստախօսութենէ հրաժարեցէ՛ք: «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ», ինչպէս կ'ըսէ մարգարէն, որովհետեւ Քրիստոսի միացած ըլլալով՝ իրարու անդամներ ենք: Եւ, ինչպէս սաղմոսերգուն կ'ըսէ. «Նոյնպէս երբ բարկանաք՝ չըլլայ որ մեղանչէք»: Եւ բարկացած չմնաք մինչեւ իրիկուն: Բնաւ առիթ մի՛ տաք սատանային: Ով որ գողութեամբ կ'ապրէր թող այլեւս չգողնայ, այլ վարժուի արդար վաստակով ո՛չ միայն իր հացը շահելու, այլ նաեւ բարիք գործելու՝ օգնելով անոնց որոնք կարօտ են: Որեւէ տգեղ խօսք չելլէ ձեր բերնէն: Խօսեցէ՛ք միայն ինչ որ պէտք է, ինչ որ բարի է՝ ուրիշներուն հաւատքը ամրապնդելու համար, որպէսզի լսողները շնորհքով լեցուին: Մի՛ տրտմեցնէ՛ք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով կնքուեցաք՝ փրկութեան օրուան հասնելու համար: Ձեզմէ արմատախիլ ըրէ՛ք ամէն դառնութիւն, բարկութիւն եւ զայրոյթ, պոռչտուք եւ հայհոյութիւն, եւ առաջքը առած կ'ըլլաք անոնց չար հետեւանքներուն: Իրարու հանդէպ քաղցր ու գթած եղէ՛ք եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի:

Աստուծոյ նմանեցէ՛ք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցէ՛ք, այնպէս ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց որպէս անուշահոտ պատարագ եւ զոհ: Պոռնկութեան, ոեւէ պղծութեան կամ ազահուլութեան խօսքն

իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէս կը վայելէ հաւատացեալներուն: Վայել չէ որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք. այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէք, թէ ոեւէ մէկը որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ազահ - եւ ազահութիւնը կուսպաշտութիւն է - ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար չըլլայ որոեւէ մէկը պարապխօսքերով ձեզ խաբէ. որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անխրատ մարդոց վրայ: Ասկէ ետք որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէպէտ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցէք. որովհետեւ լոյսի պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Զանացէք հասկնալ թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն, որոնք Աստուծոյ կամեցած պտուղները չեն տար: Ընդհակառակը, ձաղկեցէք գանոնք, որովհետեւ մութին մէջ կը գործուին անոնց արարքները որոնց մասին խօսիլն իսկ ամօթ է: Բայց բոլոր այդ ծածուկ արարքները Քրիստոսի լոյսով կը յայտնուին եւ կը յանդիմանուին, որովհետեւ լոյսը կը յայտնէ ամէն բան: Ահա թէ ինչու մարգարէն կ'ըսէ.

«Արթնցի՛ր, ո՛վ քնացած.  
դո՛ւրս ելի՛ր մեռելութենէդ,  
եւ Քրիստոս պիտի լուսաւորէ քեզ»:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(16.1-31)**

**Ի**ր աշակերտներուն Յիսուս այս առակը պատմեց.-

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացւածքներուն վերակացու տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին, ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. “Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ”: Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ. “Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ թէ ի՛նչ պէտք է ընեմ, որ երբ տէրս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ զիս ընդունին

իրենց տուներէն ներս”: Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտականները եւ առաջինին հարցուց. “Ո՞րքան պարտք ունիս տիրոջս”: Ան պատասխանեց. “Երկու հարիւր թիթեղ ձէթ”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ անմիջապէս գրէ՛ հա-րիւր”: Յետոյ հարցուց միւսին. “Դո՞ւն որքան պարտք ունիս”: Ան պատասխանեց. “Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն”: Տնտեսը ըսաւ. “Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ՛ եւ գրէ՛ երեք հարիւր յիսուն”: Տէրը ասիկա լսելով գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրենց գործերը վարելու մէջ աւելի ճարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.- Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը չահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտենական յարկերու մէջ ընդունին:

«Ով որ փոքր ծառայութեան մէջ հաւատարիմ է, մեծին մէջ ալ հաւատարիմ է. իսկ ով որ փոքր ծառայութեան մէջ անհաւատարիմ է, մեծին մէջ ալ անհաւատարիմ է: Հետեւաբար, եթէ աշխարհիկ հարստութիւնը գործածելուն մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստութիւնը ո՞վ պիտի վստահի ձեզի: Այսինքն, եթէ հաւատարիմ չեղաք աշխարհիկ հարստութեան, որ ձերը չէ, ինչպէ՞ս կ'ուզէք որ Աստուած ձեզի տայ ձեզի սպասող ճշմարիտ հարստութիւնը: Ո՛չ մէկ ծառայ կրնայ երկու տէրերու ծառայել, որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկը պիտի մեծարէ եւ միւսը արհամարհէ: Չէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին:

Փարիսեցիները, որոնք դրամասէր էին, երբ այս բոլորը լսեցին, սկսան հեգնել զինք: Յիսուս ըսաւ անոնց. «Դուք ձեզ ուրիշներուն արդար ցոյց կու տաք, սակայն Աստուած գիտէ ձեր սիրտերը: Որովհետեւ մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է: Մովսէսի Օրէնքը եւ մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս ի զօրու էին. անկէ ասդին Աստուծոյ արքայութիւնը կ'աւետարանուի եւ ամէն մարդ կը փութայ բռնութեամբ ներս մտնել: Աւելի դիւրին է, որ երկինքն ու երկիրը կորսուին, քան Օրէնքին ամենափոքր տառը:

«Ով որ իր կինը արձակէ եւ ուրիշ մը առնէ, կը շնայ. նոյնպէս կը շնայ ան, որ արձակուած կնոջ հետ կ'ամուսնանայ:

«Մեծահարուստ մարդ մը կար, որ բեհեզեւծիքանի հագուստներ կը հագնէր եւ ամէն օր փառաւոր խնձոյք կ'ընէր: Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար, որ անոր դրան առջեւ կը նստէր եւ կը

յուսար իր փորը լեցնել մեծահարուստին սեղանի աւելցուքներով: Ղազարոս վէրքերով ծածկուած էր, եւ շուներ կու գային իր վէրքերը կը լիզէին: Աղքատը մեռաւ եւ հրեշտակները զինք տարին Աբրահամին մօտ: Մեծահարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: Դժոխքին մէջ, մինչ մեծահարուստը կը տանջուէր, աչքերը բարձրացուց եւ հեռուն Աբրահամը տեսաւ, ինչպէս նաեւ Ղազարոսը որ կը նստէր անոր քով: Մեծահարուստը աղաղակեց. “Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինձի եւ զրկէ Ղազարոսը, որ մատին ծայրը ջուրին թաթիկէ եւ զովացնէ լեզուս, որովհետեւ այս կրակին մէջ ծարաւէն կը տառապիմ”: Աբրահամ ըսաւ անոր. “Որդեա՛կ, յիշէ թէ ի՛նչպէս դուն քու կեանքիդ ընթացքին ամէն բարիք վայելեցիր, մինչ Ղազարոս չարչարուեցաւ: Հիմա ան հոս կը հանգստանայ, մինչ դուն հող կը տառապիս: Գիտցիր նաեւ, որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ”: Մեծահարուստը ըսաւ. “Կ՛աղաչեմ, Հա՛յր Աբրահամ, Ղազարոսը զրկէ իմ հօրս տունը ուր հինգ եղբայրներ ունիմ. թող զանոնք նախազգուշացնէ, որպէսզի անոնք ալ տանջանքի այս վայրը չգան”: Աբրահամ ըսաւ անոր. “Անոնք Մովսէսի Օրէնքն ու մարգարէները ունին. թող անոնց պատուիրանները լսեն եւ գործադրեն”: Մեծահարուստը ըսաւ. “Ատիկա բաւարար չէ, Հայր Աբրահամ. բայց եթէ մեռելներէն մէկը յարութիւն առնէ եւ երթայ իրենց, պիտի ապաշխարեն”: Աբրահամ պատասխանեց. “Եթէ Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներուն մտիկ չեն ըներ, մեռելներէն յարութիւն առնող մըն ալ պիտի չկարենայ համոզել զիրենք”»:

**ԱՐԵՒԱԳԱԼԻ  
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**  
ԵՒ  
**ՀՈԳԵՒՈՐ  
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ**  
ՀԻՆԳԵԱՔԹԻ ՕՐԵՐՈ  
ԱռաօՏԵԱՆ ԺԱՅՐ 11.00:

**Այժմե՛ք  
Եստե՛ծոյս  
Դիմացե՛՛ր էջը**  
ԵՒ  
**ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՍԵՆՏԵՐ  
(like).**

[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

**Այժմե՛ք  
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵՍԵՂԵՅՈՅ ԿԱՅԷՏՈ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)**

**Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵՍԵՂԵՅՐ**  
**ՄԵԾ ՊԱՀՔ 2024**  
**ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**  
Չորեքաբաթ, 6 Մարտ  
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՅՐ 7.00-8.00

**ՀՈԳԵԼԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈ  
ԱՆՈՐՈՔ ԿԱՏԱՐԵՅԷ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵՍԵՂԵՅՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ:**